Հայ գաղթավայրերի առաջացումը

ՎԱՐԴԳԵՍ ՀԱՄԱԶԱՍՊԵԱՆ

Հայ գաղթավայրերը շատ հին պատմութիւն ունեն։ Մեզ հասած հայ եւ օտար պատմիչների տեղեկութիւններն ու վկայութիւնները ցոյց են տալիս, որ նրանք կազմակերպուել են հայ պետականութեան ձեւաւորման, հզօրացման շրջանում եւ գոյատեւել դարեր շարունակ։

Առաջին հայ գաղթավայրեր ստեղծողները հաւանաբար հայ զինուորական միաւորումներն են եղել, այն միաւորումները, որոնք հայ թագաւորների կողմից ուղարկուել են դաշնակցային կամ վասալական պարտաւորութիւնների կատարման համար։

Օտար երկրներում գտնուող հայ զինուորական միաւորումների մասին տեղեկութիւններ կարելի է գտնել Քսենեֆոնի, Հերոդոտի եւ օտար այլ պատմիչների երկերում։ Դեռ յոյն-պարսկական պատերազմի ժամանակ (408 թ. Ք. Ա.) պարսկական բանակում յոյների դէմ կռուել է հայկական զօրամաս։ Մանրամասն տեղեկութիւններ են պահպանուել 331 թ. Ք. Ա. Իսոսի ճակատամարտում Մակեդոնացու դէմ հայկական զօրաբանակների մասնակցութեան, նոյնիսկ հայ կռուող ուժերի թուի ու հրամանատարների մասին։ Իսկ բոլորովին պատմական է, որ՝ «Ալեքսանդրը իր արշաւանքներին ի զուր դիմադրող ժողովուրդներու զօրքերու շարքին գտաւ նաեւ հայերու վաշտերը, Իսոսի ճակատամարտի մէջ (331 թ. Ք. Ա.)։ Ակէ յետոյ, երբ Ալեքսանդրը Ասորիքը, Եգիպտոսը եւ Բաբելոնը գրաւեց, Ասորեստանի Արբելայի դաշտին մէջ պատերազմ մղեց, նոյն հայերը պարսից կայսրութեան ամենաընտիր ռազմիկներուն հետ միասին կուտակուած էին անոր դէմ։ Սակայն հայկական զօրքը շատ չէր՝ 4000 հետեւակ եւ 700 հեծեալ» (1)։

---

1) Ա. Ալպոյաճեան, Հայ Գաղթականութեան Պատմութիւն, Ա. հտր., Գահիրէ 1941, էջ 102։

Ի հարկէ, հայոց զօրքի թիւը վերաբերում է այս ճակատամարտին միայն, քանզի բազմաթիւ վկայութիւններ կան ե՛ւ Քսենեֆոնի ե՛ւ այլ պատմիչների մօտ, որ հայերը օգնական զօրք էին տալիս պարսիկներին՝ 47·000 հետեւակ եւ 8000 հեծեալ։

«Քսենեֆոնի հաղորդած վերոյիշեալ վկայութիւններից յատուկ ուշադրութեան արժանի է նրա տուած տեղեկութիւնը, որ արմէններն օգնական զօրք էին տալիս Պարսկաստանին՝ 40·000 հետեւակ եւ 8000 հեծելազօր» (2)։ Մի այլ տեղ Քսենեֆոնը վկայում է, որ հայերը չորս հազար ձիաւոր եւ քսան հազար հետեւակ էին տալիս պարսիկներին, իսկ մի մասը թողնում էին Հայաստանի պաշտպանութեան համար։ «Նա նորից արմէնների թագաւորի հետ բարեկամութիւն է հաստատում եւ պատերազմի համար վերցնում է նրա զօրքի կէսը՝ չորս հազար ձիաւոր եւ քսան հազար հետեւակ։ Զօրքի միւս կէսը նա թողնում է երկրում, որովհետեւ արմէնները շարունակ պատերազմ էին մղում հարեւան խալդերի դէմ, որոնք Քսենեֆոնի վէպում անուանուած են Խալդայներ»։

Ակադեմիկ Մանանդեանը վերլուծելով Քսենեֆոնի եւ այլ պատմիչների հաղորդած տարբեր վկայութիւնները, եկել է այն եզրակացութեան, որ Դարեհ Ա.-ի եւ նախորդների ժամանակ, արմէնները տալիս էին Պարսկաստանին հետեւակ ու ձիաւոր զօրք։ Արմենական օժանդակ այս զօրամասը, ինչպէս կարելի է եզրակացնել աղբիւրների վկայութիւններից, մասնակցել է հաւանօրէն այն բոլոր պատերազմներին, որ վարում էին Դարեհ Ա.-ը եւ իր յաջորդները՝ սկիւթացիների, յոյների ու եգիպտացիների դէմ։

Արմէնները յիշատակուած են, օրինակ Քսերքսեսի զօրաբանակի շարքերում, որն արշաւելու էր Յունաստան (480 թ. Ք. Ա.)։ Հերոդոտը վկայում է, որ այս արշաւանքին մասնակցող արմէնները զինուած են եղել փռիւգիացիների նման եւ վերջիններիս հետ գտնուել են Դարեհի փեսայ Արտոքմէսի հրամանատարութեան տակ։ Նրանք ունեցել են իբրեւ զէնք ու հանդերձանք՝ հիւսուած սաղաւարտներ, փոքր վահաններ, կարճ նիզակներ, տէգեր, սրեր եւ բարձր ճտքաւոր կօշիկներ։

Հայերի զինուորական ծառայութիւնը աքեմենեան Պարսկաստանում դիտւում էր որպէս ժողովրդի մասնագիտութիւն։ Ինչպէս երեւում է, հին աշխարհում, յատկապէս արմէնները մեծ անուն էին հանել իրենց քաջութեամբ, խիզախութեամբ, արագաշարժութեամբ, հաւատարմութեամբ։ Այդ նոր ռազմիկ ժողովուրդը յա-

---

2) Ց. Մանանդեան, Քննական Տեսութիւն Հայ Ժող. Պատմ., Ա. հտր., Երեւան 1944, էջ 83։

ճախ օգտագործում էր խոշոր պատերազմների, տեղաշարժերի, պաշտպանության եւ յարձակումների ժամանակ։

«Հայերը, նոյնպէս Աքեմենեան շրջանին, իրենց երկրէն հեռու վայրեր երթալու հարկադրուած էին զինուորական պատճառներով, վասնզի Հայաստանի բնիկ իշխանները երբ խաղաղութեան մէջ էին սատրապներուն հետ, զինուորական ուժ կը տրամադրէին կամ վարձկան զինուորներ կը հայթայթէին, որոնք իրենց առանձին գունդերով, Արքայից Արքային բանակին արշաւանքներուն կը մասնակցէին» (3), ասում է Ալպոյաճեանը։

Իսկ Մանանդեանը գտնում է, որ հայերը եւ նրանց իշխաններն ու թագաւորները ոչ միայն զօրք ու զօրային միաւորումներ էին տալիս, այլեւ հենց իրենք կազմութեամբ զինուորներ ու զինուորական միաւորումներ էին։ «Արմենական համեմատական փոքրաթիւ գաղթականները, բոլորն էլ եղել են հաւանօրէն զինուորներ» (4), եւ այդ զինուորներին անցեալում մեդացիները օգտագործել են օտար ժողովուրդների դէմ՝ որպէս զինուորական գաղթականներ։

Մանանդեանը պաշտպանելով Մարգուարդի յայտնած կարծիքը հայկական զինուորական գաղթավայրերի մասին, ասում է. «Ի նկատի ունենալով արմէնների գրաւած գաղթավայրերի ստրատեգիական բացառիկ կարեւորութիւնը, ինձ թւում է, հաւանական կարելի է համարել, որ արմէնները վերոյիշեալ շրջաններում հաստատուել էին, ինչպէս ուղիղ ենթադրել է Մարգուարդը, իբրեւ մեդացիների դաշնակից զինուորական գաղութներ (ընդգծումը իմն է – Վ. Հ.) այս վերջինների համաձայնութեամբ»։

Ինքնըստինքեան հասկանալի է, որ նման եզրակացութիւնները չէին վերաբերում հայկական մշտական գաղթավայրերին։ Աւելի շուտ վերաբերում էին այն բարդ շրջաններին, երբ դեռ շարունակւում էր հայ ժողովրդի կազմաւորման ընթացքը երբ հայ-արմէնները Վանայ լճի աւազանից շարժւում, տարածւում էին դէպի Արարատեան դաշտը, հայ լեռնաշխարհի բնակիչներին համախմբում իրենց շուրջը, աստիճանաբար հայացնում։ Տեղի էր ունենում հայ ժողովրդի կազմաւորումը, վերանում էին նախկին ցեղերն ու ցեղային միութիւնները, եւ իր ամբողջ հասակով հայոց լեռնային կղզում բարձրանում եւ միաձուլումից ծնւում էր հայ ժողովուրդը։ Բերուած փաստերը վկայում են, որ հին դարերում,

---

3) Ա. Ալպոյաճեան, Հ. Գ. Պ., Ա. հտր., էջ 102։

4) Ց. Մանանդեան, Գ. Տ. Հ. Ժ. Պ., Ա. հտր., էջ 82։

մինչեւ հայ պետականութեան սկիզբը, այսինքն՝ մինչեւ Մաղնեզիայի ճակատամարտը (190 թ. Ք. Ա.) եւ Արտաշէսեանների հանդէս գալը հայկական գաղթավայրերի ստեղծողները զինուորական միաւորումներ էին։

Ծառայութեան մէջ գտնուող զինուորական այդ միաւորումները ժամանակաւոր բնակիչներ կարող էին լինել Պարսկաստանում եւ նրա տիրապետութեան տակ գտնուող երկրներում եւ յաճախ կարող էին փոխել իրենց բնակավայրերը երկրի սահմանների պաշտպանութեան կամ ռազմական գործողութիւնների թելադրանքով։ Աւելի կայուն գաղթավայրեր հայերը հաստատում են հայկական պետութեան հզօրացման շրջանում՝ Արտաշէսեան հարստութեան նշանաւոր թագաւորների՝ Տիգրան Երկրորդի եւ Արտաւազդի գահակալութեան տարիներին։ Այդ գաղթավայրերը բաւականին երկար կեանք ունեցան եւ յարատեւեցին մինչեւ Արշակունիներ, նոյնիսկ՝ Բագրատունիները եւ հետագայում դարձան հայերի մշտական բնակավայրեր, հայկական շրջաններ։

Տիգրան Երկրորդի (95–55 թթ.) աշխարհակալ պետութեան սահմանները (Ա. դար, Ք. Ա.) Կովկասեան լեռներից ձգւում էին մինչեւ Միջին Արեւելք. Տիգրանը արեւմուտքում մի շարք նուաճումներից յետոյ իրեն ենթարկեց Մեծ Մարաստանը, Կապադովկիան, Կորդուքը, Ադիաբենը (Մուսայի շրջան), հասաւ մինչեւ Նինուէ, Արբելա, հռչակուեց «թագաւոր Ասորւոց», անցաւ Սելեւկեան թագաւորութեան շրջանները, գրաւեց Միրդոնիան (Մըծբին Ասորյենան, Ուռհայաստան, Եդեսիա, Ուրֆա), մտաւ դաշտային Կիլիկիա, հասաւ Փիւնիկիա եւ Հրէաստանի սահմանները եւ իր հզօրութեամբ ճանաչուեց ամբողջ արեւելքում որպէս թագաւորների թագաւոր՝ «Արքայից Արքայ»։ Հայերն այս շրջանում բնականաբար բնակութիւն էին հաստատում նաեւ այն երկրամասերում, որը նուաճել կամ իրեն էր ենթարկել Տիգրանը՝ Աղուանքում, Վրաստանում, Ատրպատականում, Կորդուաց աշխարհում, Միջագետքում, Ասորիքում եւ Միջերկրականի ծովափնեայ քաղաքներում, որոնք այդ ժամանակաշրջանում տնտեսութեան եւ մշակութային համաշխարհային կեդրոններն էին։ Հաստատուելով այդ երկրներում, հայ համայնքները տնտեսական – առեւտրական աշխոյժ կապերի մէջ էին մտնում բնիկների եւ հարեւան ժողովուրդների հետ, ծանօթանում օտար երկրների արհեստներին, մշակոյթին եւ իրենց աշխատանքով նպաստում Տիգրանի լայնածաւալ պետութեան եւ նոր երկրների տնտեսութեան զարգացմանը։ Ուժեղ պետականութեան պայմաններում հայը օտարութեան մէջ ոչ միայն պանդուխտ եւ անօգնական չէր զգում, այլեւ շատ դէպքերում այդ

երկրները ոտք էր դնում որպէս նուաճող, յաղթող, թելադրող, ինչպէս հին դարերում յոյները, հռոմէացիները, ասորիներն ու պարսիկները: Հայ եւ օտար աղբիւրների վկայութեամբ Միջագետքի եւ շրջապատի մի շարք երկրների բազմաթիւ քաղաքներ հիմնել են հայերը եւ հետագայում զիջել նոր նուաճողներին: Փաւստոս Բիւզանդը Պապ թագաւորի դիմումներից մէկի միջոցով հաստատում է, որ Ուռհա քաղաքը կառուցուել է մեր նախնիների կողմից, իսկ Կեսարիան եւ 10 քաղաքներ հայկական են եղել. «Եւ Պապ թագաւորը իր միտքը ծռեց ու սիրտը շուռ տուեց յունաց թագաւորից եւ կամեցաւ սէր եւ միաձնութիւն հաստատել պարսից թագաւորի հետ... Յետոյ պատգամաւորներ է ուղարկում յունաց թագաւորի մօտ, թէ՝ «Կեսարիայի հետ ուրիշ տասը քաղաք մերն են եղել, եւ տուր, Ուռհա քաղաքն էլ մեր նախնիքն են շինել, ուստի եթէ չես ուզում, որ խռովութիւն ծագի մեր մէջ...» » (5): Ինչպէս դժուար չէ հասկանալ, հայերով բնակեցուած եւ նրանց կողմից կառուցուած քաղաքները ետ ստանալու դիմումի ոճից, Պապը բիւզանդական կայսրի հետ խօսում է նաեւ սրպէս հաւասարը հաւասարի եւ ապա հաստատում, որ ինքը կարող է նոյնիսկ զէնքով պաշտպանել իր պետութեան եւ պատկանեալ քաղաքներում բնակուող հայերի շահերը: Պատմիչների վկայութեամբ, Եդեսիան, ինչպէս նաեւ ամբողջ Միջագետքը պատկանել է հայերին եւ Երուանդունիները հետագայում այն զիջել են հռոմէացիներին:

«Յովսէփոս (Հնախօսութիւն Հրէից, ԺԸ. 8) եւ Տակիտոս (Տարեգրութիւն, Բ. 3, Ժ. Կ. 34, 26, ԺԵ. – 1) կը հաստատեն որ հայկական էին Եդեսիա եւ ամբողջ Միջագետք եւ Երուանդ թագաւոր զանոնք թողած էր հռոմէացիներուն» (6):

Մեծավաստակ պատմաբանը բերելով մի շարք տեղեկութիւններ, միաժամանակ ասում է՝ «Եթէ նոյնիսկ ասոնք առասպել ալ եղած ըլլան, անուրանալի է, որ հայերը շատ վաղեմի յարաբերութիւններ ունեցած են Եփրատի արմուկին եւ անոր Միջագետքի դաշտերուն մէջէն անցնող մասերուն եզերքը գտնուող հողերուն հետ: Ոչ մէկ տարակոյս, որ Սելեւկեանց շրջանին՝ Անտիոք եւ շրջակայքը, Արշակունեաց շրջանին՝ Կոմմագենի մէջ հայ գաղութներ կային, որոնք միշտ նոր գաղթականներով ստուարացած են, ինչպէս Եփրատէն արեւմուտք գտնուող բոլոր երկիրներուն, նոյն-

---

5) Փ. Բիւզանդ, Հայոց Պատմութիւն, Երեւան 1947, գլ. ԼԲ., էջ 270:

6) Ա. Ալպոյաճեան, Հայ Գաղթականութեան Պատմութիւն, Բ. հտր., Գահիրէ 1955, էջ 401:

պէս եւ այդ շրջանակին, այսինքն՝ Սուրիոյ հիւսիսային երկրամասին մէջ։ Երբ Մեծն Տիգրան դրաւեց հիւսիսային Միջագետքի երկու ծաղկեալ նահանգները՝ Միդոնիա (Մծբին = Նիզիպին) եւ Ասորյենա (Ուռհայաստան = Եդեսիա = Ուրֆա), ինչպէս նաեւ Միւրիան՝ մինչեւ Հրէաստանի սահմանները, հայերը յարաբերութիւն սկսան ունենալ այս նահանգներուն հետ» (7)։

Հայերը ոչ միայն բնակութիւն էին հաստատում եւ տարածւում նուաճած երկրներում, այլեւ իրենց ենթակայ եւ հայ թագաւորների լծի տակ ընկած ժողովուրդներին զանգուածաբար քշում եւ բնակեցնում էին Հայաստանում։ Պատմութիւնից յայտնի է, թէ ինչպէս Տիգրան Բ. իր նուաճումների շրջանում հազարաւոր եւ տասնեակ հազարաւոր հրեաներ ու յոյներ տեղահանեց եւ բերեց բնակեցրեց Տիգրանակերտում եւ Հայաստանի այլ քաղաքներում։

Ֆէոդալական յարաբերութիւնների զարգացումը եւ Արշակունիների հարստութեան անկումը, արտաքին եւ ներքին ուժերի նոր բախումները ամբողջովին շրջեցին հայ ժողովրդի պատմութեան զարգացման ընթացքը։ Նախարարական տների կողմից հայկական ուժեղ կեդրոնաձիգ պետութեան ստեղծման բոլոր փորձերը ձախողուեցին, Հայաստանը դարձաւ նոր բարձրացող ժողովուրդների եւ յարձակուող մրցակից պետութիւնների պատերազմների թատերաբեմ, որը յաճախ ենթարկւում էր արշաւանքների, աւերումների։ Տեղահանողը տեղահանուեց։ Օտար նուաճողները հայերին աշխատեցին հեռացնել իրենց բնակավայրերից, քշելով նրանց պարսկական եւ բիւզանդական տիրապետութեան ծայրագաւառները։

Այդ տեսակէտից առանձին հետաքրքրութիւն է ներկայացնում 4-րդ դարը։ Պարսից Սասանեանները եւ Բիւզանդական կայսրերը կեղծ բարեկամական, դիւանագիտական, ռազմական եւ այլ ճանապարհներով հետապնդում էին Հայաստանի մասնատումը։ Սասանեանների յաղթանակը Պարսկաստանում եւ Արշակունիների գոյութիւնը Հայաստանում չէր կարող խորը թշնամանք չառաջացնել երկու դինաստիաների միջեւ։ Այդ թշնամանքը աւելի սրուեց, երբ հայերը հաւատով նոյնպէս հեռացան պարսիկներից։ Դինաստիական պայքարին միացաւ եւ հաւատի պայքարը, իսկ հին հաւատը կողմնակիցներ շատ ունէր Հայաստանում։ Զրադաշտը իր տեղը հեշտութեամբ չէր զիջում քրիստոնէութեանը։ Բախումները ռազմաղաշտից տեղափոխւում էին ֆէոդալական տները եւ եկեղեցինե-

---

7) Նոյնը։

ը, նախարարների եւ հոգեւորականների շրջանները, այսինքն՝ այն օղակները, որոնք կարող էին յաղթանակ կամ պարտութիւն բերել երկրին։ Սասանեանները պարսկասէրների միջոցով, իսկ բիւզանդական կայսրերը բիւզանդասէրների՝ մեծ պայքար են ծաւալում. Հայաստանի թագաւորական պալատում, նախարարական դղեակներում ու դրանով թուլացնում երկրի միասնութիւնը։ Միասնութեան խախտումը հող էր նախապատրաստում պատերազմական գործողութիւնների համար։ Փաւստոսի վկայութեամբ Շապուհ Երկարակեացը տասնեակ արշաւանքներ է կազմակերպել Մերուժան Արծրունու եւ Վահան Մամիկոնեանի մասնակցութեամբ Սասանեանների վաղեմի բաղձանքը կատարելու՝ հայ պետականութեանը ոչնչացնելու համար։

Յաճախ կրկնուող պատերազմներն ու արշաւանքները, քաղաքների ու աւանների աւերումը, զանգուածային տեղահանումները եւ ժողովրդին հեռաւոր երկրներ քշելը քայքայում էին երկրի տնտեսութիւնը, իսկ նշանաւոր ուժեղ թագաւորներին եւ զօրավարներին խարդախ ճանապարհներով ոչնչացնելը (Արշակ Բ., Վասակ Մամիկոնեան, Պապ, Մուշեղ, եւայլն) թուլացնում էր ժողովրդի բարոյական ոգին։

Հայերի տեղահանումները պարսիկները եւ բիւզանդացիք կատարում էին շատ ծրագրուած եւ մեթոդիկ։

Տեղահանումները աւելի մասսայական բնոյթ էին ստանում պատերազմների ժամանակ, երբ օտարները գրաւում էին հայկական քաղաքներն ու բնակավայրերը։ Փաւստոս Բիւզանդի վկայութեամբ, 368 թ.-ին Արտաղերսի հերոսական պաշտպանութիւնից յետոյ, երբ ընկաւ Արտաղերսը, եւ պաշտպանութեան կազմակերպիչ Փառանձեմ թագուհին գերուեց, պարսից յարձակուող բանակները հիմնայատակ քանդեցին հայկական քաղաքներն ու աւանները, տասնեակ հազարաւոր հայերի քշեցին դէպի գերութիւն, դէպի օտար երկրներ։ «Այնուհետեւ եկան Արտաշատ մեծ քաղաքը, նրան առան, պարիսպները կործանեցին, այնտեղ էլ պահուած գանձերը առան եւ ամբողջ քաղաքը գերի վարեցին։ Արտաշատ քաղաքից գերի տարան ինը հազար տուն հրեայ եւ քառասուն հազար տուն հայ։ Առնում էին Վաղարշապատ քաղաքն էլ, քանդում, բերում էին, հիմքից կործանում էին։ Այս քաղաքից էլ գերի էին տանում տասնինը հազար տուն։ Առան Երուանդաշատ մեծ քաղաքն էլ, այստեղից դուրս բերին քսան հազար տուն հայ եւ երեսուն հազար տուն հրեայ, իսկ քաղաքը հիմնայատակ կործանեցին։ Յետոյ առան Բագրեւանդի եւ Զարեհաւան քաղաքը, այստեղից էլ գերի վերցրին հինգ հազար տուն հայ եւ ութ հազար տուն հրեայ եւ քաղաքը հիմնաւեր

կործանեցին։ Առան նաեւ Զարիշատ մեծ քաղաքը Աղիհովիտ գաւառում, դերի վերցրին տասնչորս հազար տուն հրեայ եւ տասը հազար տուն հայ, եւ այն էլ հիմնայատակ կործանում էին։ Առան նաեւ Վան ամուր քաղաքը, Տողբ (պէտք է կարդալ Տոսպ) գաւառում, կրակ տուին, այրեցին, հիմքերը քանդեցին, այնտեղից էլ դուրս բերին հինգ հազար տուն հայ եւ տասնութ հազար տուն հրեայ» (8)։ Այնուհետեւ Փաւստոսը նկարագրում է, թէ ինչպէս պարսիկները դուրս բերին դերիներ զանազան գաւառներից, կողմերից, եօթ գաւառներից, աշխարհներից, ժողովեցին բերին Նախիջեւան քաղաքը, որը իրենց զօրքերի զօրաժողովի տեղն էր։ Փաւստոսը մի այլ տեղ յիշատակում է, որ դերիներին տարան բնակեցրին Ասորեստանում, որ է Խուժաստան, ըստ Խորենացու տարան Ասպահան։ Թովմա Արծրունին նոյնպէս յիշատակում է, որ հինգ հազար հրեաներ, ութ հազար քրիստոնեաներ են տեղահանուել Վանից։

Եթէ իւրաքանչիւր ընտանիքը (ծուխ) հաշուելու լինենք 6–10 հոգի, իսկ հնում ընտանիքները փոքր չէին լինում, ապա պարզ կը դառնայ, որ պարսիկները միայն այս շրջանում, այսինքն՝ 360–70-ական թուականներին, երկրից քշել են աւելի քան 800 հազար հայեր։ Ինչ խօսք, Փաւստոսի մօտ թուերի չափազանցութիւն կայ, սակայն չպէտք է մոռանալ, որ վկայութիւնը մասսայական տեղահանման մասին է, նոյնիսկ «պարսիկ պատմագիրի մը վկայութեամբ, Շապուհի պաշտօնապէս հրատարակած հալածանքը քրիստոնէութեան դէմ մինչեւ 200·000 քրիստոնէից նահատակութեան պատճառ եղած էր» (9)։ Միանգամայն հասկանալի է, որ նման մասսայական տեղահանման նպատակը երկրի տնտեսական ուժի, պետական ու ռազմական հզօրութեան թուլացումն էր, որին հետապնդում էին մրցակից երկու պետութիւնները՝ Բիւզանդիան եւ Պարսկաստանը։ Իրագործելով իրենց չարամիտ ծրագրերը, ժամանակի երկու հզօր տէրութիւնները 387 թ. Հայաստանը բաժանեցին երկու մասի։ Պարսկաստանի տիրապետութեան տակ անցաւ Հայաստանի մեծ մասը (չորս–հինգերորդը) պահպանելով ձեւական անկախութիւնը, իսկ Բիւզանդիան տէր կանգնեց արեւմտեան մասին նոյնպէս, պահպանելով հայոց թագաւորութիւնը։ Հասկանալի է, որ մի ժամանակ հաւասարի, դաշնակցի իրաւունքով օգտուող Հայաստանին, որը հասել էր ուժեղ պետականութեան, բարձր մշակոյթի, չէին կարող միանգամից զրկել պետականութիւնից, յատկապէս՝ թագաւորութիւնից։ Այսպիսով, Արեւելքի հզօր տէրու-

8) Փ. Բիւզանդ, Հայոց Պատմութիւն, գլուխ Դ., էջ 220–221։

9) Ա. Ալպոյաճեան, Հ. Գ. Պ., Ա. հատ., էջ 122։

թիւններից մէկը «Ասորաց թագաւոր», «թագաւորների թագաւոր»ի պետութիւն Հայաստանը, վերջնականապէս ծնկի եկաւ, բաժանուեց երկու մասի, երկու թագաւորութիւնների։

Սակայն այդ բաժանումը դեռ սկիզբն էր պետական, դիւանագիտական, ռազմական այն մութ ծրագրերի, որ դարեր շարունակ մշակուել էին հռոմէական, բիւզանդական, պարսկական կայսրերի եւ թագաւորների խորհուրդներում, ռազմական շտաբներում։ Նուաճողները լաւ գիտէին, որ երկու թագաւորութիւնների պայմաններում, երկարամեայ պետականութեան փորձ, մեծաքանակ ազնուականութիւն եւ զինուորականութիւն ունեցող հսկայական երկրամասերում տարածուած Հայաստանը բոլոր դէպքերում կը փորձի օգտագործել առիթները՝ միաւորուելու եւ անկախութիւն հաստատելու համար։ Եւ բիւզանդական նուաճողները շատ մեթոդիկ ու մտածուած աշխատում են իրականացնել իրենց նախորդների ծրագրերը, բաժանուած Հայաստանին զրկել նաեւ ենթակայ պետութեան իրաւունքներից, «Ապա յունաց եւ պարսից թագաւորների դեսպաններն ու պատգամաւորները, իրենց մեծ երեւակայութիւն ունեցան եւ երկու թագաւորները, յունաց եւ պարսից, իրար հետ խորհուրդ արին, համաձայնութեան եկան։ Նրանք յարմար համարեցին նախ հայոց աշխարհը երկու բաժին անել իրենց մէջ։ Նրանք ասում էին «Մեր երկուսի միջեւ ընկած է այս ազգ, հարուստ թագաւորութիւնը (ընդգծումը իմն է – Վ. Հ.), լաւ կը լինի, որ այս միջոցով թուլացնենք ու խանգարենք այս թագաւորութիւնը։ Նախ երկու մասի բաժանենք այս երկու Արշակունի թագաւորներով (10), որոնք նշանակեցինք, յետոյ կ'աշխատենք նրանց էլ կրճատել, աղքատացնել եւ մեր ծառայութեան ենթարկել (ընդգծումն իմն է – Վ. Հ.), որպէսզի մեր մէջ չկարողանան գլուխ բարձրացնել»։» (11)։

Որոշ շրջանից յետոյ, երկու ախոյեան պետութիւնները, պայմանաւորուածութեան համաձայն, հայոց աշխարհի իրաւունքները կրճատեցին (12), վարչական փոփոխութիւնների միջոցով

---

10) Խոսքը Մանուէլի մահից յետոյ Արշակ Գ.ի եւ Խոսրով Ա.ի մասին է։

11) Փ. Բիւզանդ, *Հայոց Պատմութիւն*, Դպր. Զ., գլ. Ա., էջ 298։

12) 391 թ. երբ Արշակ Գ. մահացաւ, հռոմէացիք այլեւս բիւզանդական հատուածում նոր թագաւոր չկարգեցին, իսկ պարսկական մասում հայոց թագաւորութիւնը պահպանուեց մինչեւ 428 թուականը, մինչեւ վռամ Շապուհի մահից յետոյ Յազկերտ առաջինը հրաժարուեց Արտաշէսին յաջորդ նշանակել եւ հայոց թագաւոր նշանակել եւ երկրի կառավարումը յանձնուեց Պարսկաստանի կողմից նշանակուած հայ եւ պարսիկ մարզպանների։

ոանահարեցին նախարարների տանուտիրական ժառանգական իրաւունքները (13), *հարուստ ու բարգաւաճ Հայաստանը աղքատացրին։ Զնայած ծայր առած բազմաթիւ ապստամբութիւններին, ժողովրդական ազատագրական պատերազմներին* (14), *յաղթանակներին ու պարտութիւններին, դաշինքներին ու պայմանագրերին, Հայաստանը դարձաւ նուաճող պետութիւնների ծառայութեանը ենթակայ բղկտուած մի երկիր։*

Նուաճողների կողմից ձեռնարկուած վերակազմութիւնները հետապնդում էին ոչ միայն վարչական, ռազմական, տնտեսական նպատակներ, այլեւ ձուլման։ Մէկը միւսին յաջորդող օրէնքները պահանջում էին, որ հայերը բոլոր դէպքերում հետեւեն պարսկական եւ բիւզանդական սահմանումներին, օրէնքներին ու հրահանգներին։ Սակայն այդ բոլորով չէին բաւարարւում պարսկա-բիւզանդական բռնակալները, նրանք մշակում էին շատ աւելի ահաւոր բաններ ու ծրագրեր հայերի ոչնչացման։ Այդ տեսակէտից բնորոշ է Մորիկ կայսրի նամակը Խոսրով Բ. Պաւրեզին։ Հայ պատմագիրներից Սեբէոսը պահել է այդ նամակի բովանդակութիւնը, որը ասում է. «Մի խոտոր ու անհնազանդ ազգ կայ մեր մէջ եւ պղտորում է, բայց արի – ասում է նա – ես իմը ժողովեմ եւ Թրակիայում դումարեմ, դու քոնը ժողովիր եւ հրամայիր արեւելք հանել։ Եթէ նրանք մեռնեն, ապա կը մեռնեն մեր թշնամիները, եւ եթէ սպաննեն, մեր թշնամիներին կը սպաննեն, եւ մենք խաղաղութեամբ կ՚ապրենք։ Որովհետեւ, եթէ դրանք իրենց երկրում մնան, մենք հանգիստ չենք լինի» (15)։

---

13) Նկատի ունենք պարսից արքունիքում հայ նախարարների դիրքի իջեցումը, հարկային նոր սիստեմը, իսկ բիւզանդական մասում Զենոն կայսրի (471–491 թթ.) հայ նախարարական տների ժառանգական իրաւունքների սահմանափակումը, Յուստինիանոս կայսրի (527–565 թթ.) ռազմական (529 թ.), վարչական, տնտեսական վերակազմութիւնները (536 թ.), որի համաձայն բիւզանդական Հայաստանը բաժանուեց 4 մասի՝ Առաջին Հայք, Երկրորդ Հայք, Երրորդ Հայք եւ Չորրորդ Հայք, իսկ հայ նախարարութիւնները նոր ժառանգութեան օրէնքով տրոհուեցին։

14) Այս շրջանում նշանաւորուեցին 450–451 թ. Վարդանանց պատերազմը, 461–484 թթ. Վահան Մամիկոնեանի գլխաւորած եւ 571–572 թթ. Կարմիր Վարդանի առաջնորդութեամբ համաժողովրդական ապստամբութիւնները։

15) Սեբէոս, *Սեբէոս Եպիսկոպոսի Պատմութիւն*, Երեւան 1939, էջ 49։

Մորիկի նամակը ցոյց է տալիս, որ՝

1· Բիւզանդացիք եւ պարսիկները թէեւ Հայաստանը ենթարկել են իրենց, սակայն հայերը շատ չէին փոխուել եւ մնացել էին «խոտոր», այսինքն՝ անհնազանդ։ Անհնազանդութիւնը արտայայտւում էր պետութեան վերականգնման փորձերով, ցեղային ապստամբութիւններով, որ յաճախ կրկնւում էին Պարսկաստանում եւ Բիւզանդիային ենթակայ հողամասերում։

2· Պարսկական, բիւզանդական կառավարողներին շատ էին անհանգստացնում երկրի ներսում պահպանուող հայ ռազմական ուժերը եւ զինուորականութիւնը, որի վրայ յենուած հայ նախարարական տները հայոց պետականութիւնը վերականգնելու փորձեր էին անում։

3· Չնայած զանգուածային տեղահանումներին, վարչական փոփոխութեանց, հարկային ծանր քաղաքականութեան, հայերը շարունակում էին մեծամասնութիւն կազմել բուն երկրում, որը եւ դժուարացնում էր ուղեգծուած քաղաքականութեան իրականացումը՝ երկրի պարսկացումն ու բիւզանդականացումը, այսինքն՝ հաւատափոխումն ու ձուլումը։

4· Որքան զանգուածարար, որքան արագ հայերը հեռացուէին իրենց բնաշխարհից, այնքան շուտ նրանք կը մոռանային հայրենիքը, իրենց պետութիւնը։

5· Դեռ 6-րդ դարի վերջերին, այսինքն՝ հայ պետականութեան վերացումից շուրջ երկու հարիւր տարի յետոյ, հայերը նոր բարձրացող ժողովուրդների նման, շարունակում էին մնալ սպառնալից եւ վտանգաւոր ուժ Բիւզանդիայի համար։

Պատմական աղբիւրների վկայութիւնից երեւում է, որ բիւզանդացիք եւ պարսիկները շատ մտածուած ու խորամանկ ձեւերով էին հայերին հեռացնում իրենց բնակավայրերից։ Կայսրութեան սահմաններից պաշտպանութեան, պահակազօրի, պատերազմների անուան տակ հայ զինուորական միաւորումները քշում տանում էին հեռաւոր երկրներ։ Միաժամանակ հայ նշանաւոր զինուորականներին սիրաշահելու, կաշառելու, նրանց դժգոհութիւնը մեղմելու, կայսրութեան կողմը գրաւելու եւ երկրից դուրս պահելու նպատակով նշանակում էին բարձր պաշտօնների, նոյնիսկ արշաւանքների, ռազմական մեծ գործողութիւնների ղեկավարներ, ընդհանուր հրամանատարներ։ Բիւզանդացիք բոլոր դէպքերում չէին մոռանում առանձնացնել հողեր, հողամասեր, նոյնիսկ երկրամասեր՝ ծառայութեան դիմաց հայ զինուորականներին առատօրէն վարձատրելու, նոր հողերի հետ կապելու համար։

Կայսրերը հայ ռազմական ուժերը օգտագործում էին կայսրության սահմանների պահպանման, յարձակուող ուժերի պատնէշման, նոր յարձակումների կազմակերպման, կայսերական պալատի պահպանման համար։ Պրոկոպիոս Կեսարացին, որը ոչ միայն նշանաւոր պատմիչ էր, այլեւ իր ժամանակի պետական, վարչական գործերի լաւատեղեակ անձնաւորութիւն եւ Յուստինիանոսի պալատին մօտ կանգնած գործիչ, իր «Պատերազմների Մասին» գրքի վերջին մասում, որը «Գաղտնի Պատմութիւն» խորագիրն է կրում, գրում է. «Սկզբում պալատի պահպանութեան համար առանձնացուել էր երեք հազար հինգ հարիւրից ոչ պակաս ստրիատիոտներ։ Ի սկզբանէ անտի պետութիւնը սրանց վճարում էր շատ աւելի ոռճիկ, քան մնացած բոլոր (ստրիատիոտներին)։ Անցեալում կայսրերը սրանց ընտրութեան ժամանակ նկատի ունէին մարդկանց արժանիքները եւ հայերին էին տալիս նախապատուութիւնը։ Բայց սկսած Զենոն կայսրից (ստրիատիոտ) անունը սկսուեց տըրուել վախկոտ եւ պատերազմի մասին բոլորովին գաղափար չունեցող մարդկանց։ Ժամանակի ընթացքում նոյն ստրուկները դրամով գնում էին Ստրիատիոտի կոչումը։ Երբ թագաւորութիւնը Յուստինիանոսն ստացաւ, Յուստինիանոսը շատերին արժանացրեց այդ պատուին, նրանցից շատ դրամ շորթելով» (16)։ Պրոկոպիոսը իր աշխատութեան մէջ նոյնիսկ շատ մանրամասն բնութագրում է այն 17 հայ նշանաւոր զօրավարներին (Արտաւան եւ Արշակ Արշակունիները, Ներսէս, Հրահատ, Սահակ եւ Ներսէս Կամսարականներ, Արտաւազդ, Համազասպ, եւ այլն), որոնք Յուստինիանոսի ժամանակ մեծ ծառայութիւններ են մատուցել Իտալիայում, Թրակիայում, կայսրութեան բոլոր նահանգներում՝ պաշտպանելով Բիւզանդիայի շահերը։

Պարսիկները, բիւզանդացիները փորձուած ու ճանաչում գտած զինուորականներին պաշտօնների նշանակելով իրենց բանակներում, չէին մոռանում նաեւ հայ կռուող զինուորներին։ Յաճախ հայկական այրուձին ուղարկելով հեռաւոր երկրներ, ձախողեցնում էին ապստամբութեան եւ պետականութեան վերականգնման ամէն մի փորձ։ Պատմիչների վկայութեամբ, հայերը բիւզանդացիներին տալիս էին պատերազմական անփոխարինելի ձիաւոր եւ աղեղնաւոր մարտիկներ։ Ինչպէս հաստատում է Պրոկոպիոս Կեսարացին, Յուստինիանոս կայսրի պահակազօրը ամբողջովին կազմուած է եղել հայերից։ Աւելի քան երկու դար Իտալիայում է գտնուել հայկական երեք հեծելազօր գունդ։ Յուստինիանոսի ժամանակ

16) Պրոկոպիոս Կեսարացի, Երեւան, 1967, էջ 296։

բազմաթիւ հայեր դրաւել են պետական եւ հրամանատարական բարձր պաշտօններ եւ կռուել բիւզանդացիների փառքի, պետականութեան հզօրացման, նուաճած երկրների պահպանման համար։

Նշանաւոր բիւզանդագէտ Շարլ Դիլը բազմաթիւ աղբիւրների ուսումնասիրութեան հիման վրայ հաստատում է, որ «նախաձեռնող հայ ազնուականութիւնը կամովին ծառայութեան էր մտնում բիւզանդական բանակում», Բիւզանդիան Հայաստանից ստացել է հրաշալի շատ զօրահրամանատարներ եւ դերազանց վարչական աշխատողներ։

Հայկական ծագում ունէին նոյնիսկ որոշ կայսրեր. Հերակլը՝ 7-րդ դարում, Լեոն Հայկազնը՝ 9-րդ դարում, Ռոմանոս Լիկոբենոսը եւ Յովհաննէս Զմշկիկը՝ 10-րդ դարում։ Բիւզանդիան Հայաստանին է պարտական այդ ժամանակ իր հրաշալի զինուորների համար, որովհետեւ հայկական ջոկատները 10-րդ դարում համարում էին բիւզանդական բանակի լաւագոյն զօրամասերը։ Ուստի դժուար չէ հասկանալ, թէ ինչու կայսրութեան կառավարութիւնը երազում էր այդ բնակչութեանը, որն ամբողջովին գտնւում էր բիւզանդական ազդեցութեան տակ, իր հպատակը դարձնել։

«Յուստինիանոսը (527–565 թթ.), որ կայսրութեան պիտի տար իր ամենամեծ ծաւալը եւ ամենէն մեծ փառքը, գրում է Ալպոյաճեանը, իր գործունէութեան մէջ ունէր բազմաթիւ նշանաւոր հայ զինուորականներ, որոնք այդ փառաւոր շրջանին գլխաւոր դէմքերը հանդիսացան... Ասոնց մէջ բարձրագոյնին կը կանգնի անփոխարինելի դէմքը Ներսէս հայ զօրավարին։ Թէեւ հասակով կարճ է, ոչ յաղթանդամ կամ անձնազեղ, կանուխ ցուցուցած ըլլալով բարձր ձիրքեր, սուր միտք, զօրեղ կամք եւ ժիր գործունէութիւն...» (17)։

Ներսէսը ոչ միայն փայլուն զօրավար էր, այլեւ խոշոր պետական գործիչ։ Նրան է վերագրւում հիւսիսային Իտալիայի մայրաքաղաք Միլանոյի հիմնադրումը, Վենետիկի եւ Միլանոյի մի շարք եկեղեցիների եւ դրատան կառուցումը։

Բիւզանդական կայսրերը հայ զօրավարների հետ միասին, օտար երկրներում, երկար տարիներ պահում էին նաեւ հայկական միաւորումներ։ Հայկական զօրամասեր են պահուել Սիկիլիայում, Կրետէ կղզում, Ափրիկէի հիւսիսային շրջաններում, Եգիպտոսում եւ այլ վայրերում։ 778 թուականին, երբ բիւզանդական բանակները ռազմական գործողութիւններ սկսեցին խալիֆայութեան դէմ,

---

17) Ա. Ալպոյաճեան, Հ. Գ. Պ., Ա. հտր., էջ 165–166։

Բիւզանդիայի Փոքր-Ասիական հինգ զօրամասերից չորսի հրամանատարները հայեր էին՝ Արտաւազդ Մամիկոնեան, Տաճատ Անձեւացի, Վարազտիրոց Բագրատ եւ Գրիգոր Մուշեղիկ Մամիկոնեան։ Զինուորականների հետ միասին հեռաւոր երկրներում ապրում էին նրանց ընտանիքները, բարեկամներն ու հարազատները, այդ շրջաններում հաւաքւում էին նաեւ հայ վաճառականներ, արհեստաւորներ, մտաւորականներ, առանձին շրջաններում գիւղացիական հոծ զանգուածներ եւ նորից սկիզբ է առնում հայ կեանքը։ Նոր բնակավայրերում կառուցւում էին հայկական վանքեր, եկեղեցիներ, վաճառատներ, բացւում ուսուցման եւ կրթութեան օճախներ, հայ համայնքը յարմարւում էր նոր երկրների եւ նոր ժողովուրդների կեանքին, մասնակցում տնտեսութեան զարգացմանն ու կառավարմանը, դառնում նոր երկրի մշտական բնակիչ, պաշտպանում նոր բնակավայրի շահերը եւ շատ դէպքերում մոռանում իր հայրենիքը։ «Անոնք ամէնն ալ զինուոր չէին կրնար ըլլալ։ Անոնց մէջ անշուշտ կային երկրագործներ, առեւտրականներ՝ փերեզակ կամ վաճառական, արհեստաւոր կամ բանուորներ, որոնք բացառիկ փայլով մը շողացող կայսրութեան մէջ պատեհութիւններ ունէին իրենց ձիրքերը եւ ընդունակութիւնները երեւան հանելու» (18)։

Չնայած իր մասնատուածութեան, կրկնուող գաղթերի ու տեղահանումների զինուորական ու տնտեսական ուժերի քայքայման, դարեր շարունակ հայոց երկիրը պահպանում է իր զինուորականի ուժի, շինականի աշխատասիրութեան, արհեստաւորի վարպետութեան հռչակը։

«Հայ նախարարները, ազատականներն իրենց զօրականներով, հետեւողներով, շինականներով կու գային հաստատուելու Արմենեան եւ Անատոլիկ բանակաթեմերուն հողերը։ Հայաստանն ամենէն արդիւնաւոր հողն էր զօրք հաւաքելու համար եւ ամենից քաջամարտիկ՝ տեսակէն» (19)։

Վասիլ առաջինի ժամանակ, երբ ճնշւում է Պաւղիկեանների սոցիալիստական հզօր շարժումը, որն ուղղուած էր ե՛ւ ներքին, ե՛ւ օտար շահագործողների դէմ, տասնեակ հազարներով հայ գիւղացիներ տեղահանւում են իրենց բնակավայրերից եւ քշւում Պալքանները, նոյնը կրկնւում է Թոնդրակեցիների շարժման ժամանակ՝ 9–11-*րդ դարերում։*

---

18) Ա. Ալպոյաճեան, Հ. Գ. Պ., Ա. հտր., էջ 175։

19) Գ. Ֆենտըքլեան, *Հայազգիներ եւ Բիւզանդիոն*, «Հայաստանի կոչնակ», 1935, էջ 354։

Բիւզանդիայի բռնադաղթի ձեւերից մէկն էլ ժողովուրդների մի բնակավայրից մի ուրիշ բնակավայր տեղափոխելն է եղել։ Դրանով կայսրութիւնը աշխատել է նուաճած երկրները ոչ միայն տնտեսապէս, այլեւ քաղաքականապէս թուլացնել։ «Ինչպէս յայտնի է, – ասում է ռուս բիւզանդագէտ Ա. Վասիլեւը, – բիւզանդական պետութեան շատ սիրած միջոցառումներից մէկը, տարբեր ժողովուրդների մի շրջանից միւսը գաղթեցնելն է հանդիսացել, այսպէս օրինակ՝ սլաւոնների փոխադրելն է Փոքր Ասիա, իսկ հայերին Պալքանեան թերակղզին»։

Արտաղաղթը մինչ Բագրատունիների թագաւորութեան անկումը, շատ աւելի զուսպ է եղել ու սահմանափակ։ Այն շատ աւելի մեծ չափերի է հասել, երբ Հայաստանը վերջնականապէս կորցրել է իր քաղաքական անկախութիւնը։ Բիւզանդացիների եւ սելճուքների հարուածների տակ, երբ ընկնում է հայոց մայրաքաղաք Անին, արտաղաղթը շատ աւելի մեծ ծաւալ է ընդունում։ Հայերի մի մասը, թողնելով հայրենի հողը, տունը, բնակութիւն է հաստատում հարեւան ժողովուրդների՝ վրացիների եւ աղուանների երկրներում, իսկ միւս մասը՝ չէում է շատ աւելի հեռաւոր եւ անծանօթ երկրներ, դէպի հիւսիսային ու արեւմտեան տափաստանները։

Հայերին իրենց հողից հեռացնում էին ոչ միայն պարսիկները ու արաբները, սելճուքները ու մոնկոլները, այլեւ բիւզանդական հայազգի կայսրերը։ Տեղահանումները կատարւում էին ե՛ւ կամաւոր, ե՛ւ բռնի։ Հայ իշխանական տների ժառանգները, նախարարները, մեծ ու փոքր հայ թագաւորները, փոխանակ միացեալ ուժերով օտար զաւթիչների դէմ պայքարելու, բռունցք կազմելու ամէն մի նոր յարձակում ետ վանելու համար, յուսալքուած թողնում, լքում էին հայրենի երկիրը, կամ վաճառում ժառանգութիւնը եւ բռնում օտար երկրների ճանապարհը, յանձնած սեփական հողերի, գիւղերի, քաղաքների եւ ապրանքների դիմաց նոր երկրներում ստանում հողակտորներ՝ իրենց ապրուստի, ապահով կեանքի եւ վայելքի համար։ 11–րդ դարում Վասպուրականի Սենեքերիմ Արծրունին, Վասիլ Պուլկարասպանին յանձնելով ամբողջ Վասպուրականի 10 քաղաքները, 72 բերդերը, 1000–ից աւելի գիւղերը, փոխարէնը ստանում է Սեբաստիա քաղաքը իր շրջապատով։ Պահպանուած տեղեկութիւնների համաձայն, այս նոր շրջաններում արդէն բնակութիւն էին հաստատել շուրջ 400 հազար հայեր։

Պատմութեանը ծանօթ է, թէ ինչպէս բիւզանդացիք նենգութեամբ երիտասարդ Գագիկ թագաւորին կանչում են Պոլիս եւ 1044 թուին գրաւում հայոց վերջին մայրաքաղաք՝ տիեզերահռչակ Ա-

նին ու որպէս հատուցում հայոց թագաւորին «նուիրում» Կեսարիայում Պիզա քաղաքը։ Ցայտնի է, որ Կարսի թագաւորը ահաբեկուած նոր յարձակումներից, իր տէրութիւնը «յանձնում է» բիւզանդացիներին, փոխարէնը Կիլիկեան Տաւրոսի երկրամասում ստանում Ծամնդաւ քաղաքը։ Միքայէլ Ասորին պատմում է, թէ ինչպէս Վասիլ կայսրի ժամանակ ծայր առաւ մեծ տեղահանումներ եւ ինքը՝ Վասիլ կայսրը Սենեքերիմի ձեռքից խլեց Վասպուրականը եւ փոխարէնը տուեց Սեբաստիան։ Միքայէլ Ասորին նշում է, որ հայերը բաղմացան այս շրջանում եւ այստեղից է, որ տարածուեցին Կապադովկիա, Կիլիկիա եւ Ասորիք։

Հայ պատմադիրները՝ Արիստակէս Լաստիվերտցին, Ուռհայեցին, Սամուէլ Անեցին, Կիրակոս Գանձակեցին, Թովմա Արծրունին, Վարդանը, Սմբատը նոյնպէս մանրամասն տեղեկութիւններ են յայտնում տեղահանումների վերաբերեալ եւ մեծ կսկիծով ու ցաւով պատմում բիւզանդացիների վայրագութիւնների ու նենգութիւնների մասին։ Ֆրանսացի նշանաւոր բիւզանդագէտ Լորանը (Laurent) ուսումնասիրելով այդ շրջանի հայերի տեղահանումներն ու վերաբնակեցումը գրում է որ հայերը ապրում էին բիւզանդական կայսրութեան արեւելեան նահանգներում։ Կազմում էին բնակչութեան գրեթէ ամբողջութիւնը Իբերիայի (հիւսիսային Եփրատի հովիտ) եւ Միջագետքի (հարաւային Եփրատ) թեմերի (20)։

11-րդ դարում կայսրութեան տիրապետութեան որոշ շրջաններ գրեթէ ամբողջութեամբ զուտ հայ երկրներ էին։

Հայերի կուտակումները եւ տեղափոխութիւնները այնքան լայն չափերի են հասնում բուն Հայաստանից դուրս, Տարսոն, Կապադովկիա, Միլիտենէ, Տաւրոս, Կեսարիա, Եդեսիա, որ նոր վայրերում կառավարման համար ստեղծւում էին հայկական իշխանութիւններ, իսկ շատ շրջանների բերդերի եւ ամրոցների պաշտպանութիւնը կայսրութիւնը ստիպուած է լինում յանձնել հայ զինուորականների եւ իշխանների։ «Ոմանք, հոն հարստացան, եղան մեծ հողատէրեր – կալուածատէրեր, հրամայեցին բանակներու եւ զաւառներու, գլուխը անցան կայսերական կառավարութեան եւ նոյնիսկ բարձրացան, ոչ առանց փայլի, Պոլսոյ կայսերական դահը... բնակչութիւնը հոն այնքան մեծ չափով խառնուած էր հայերու հետ, որ այդ երկրամասին անունը դրուեցաւ Փոքր Հայք, յետոյ կառավարութիւն Արմենեակներու» (21)։ Նոր բարձրացող

20) Ա. Ալպոյաճեան, Հ. Գ. Պ., Ա. հտր., էջ 251։

21) Նոյնը, էջ 252։

ֆէոդալական եւ իշխանական տները, օգտագործելով կայսրութեան թուլութիւնը, երբեմն ապստամբում էին, ստեղծում հայկական մեծ ու փոքր իշխանութիւններ եւ իրենց անկախ յայտարարում։

Այսպիսով, հայերը անկախ իրենց կամքից եւ ցանկութիւնից, զանգուածաբար հաստատւում էին բիւզանդական լայնածաւալ պետութեան մէջ, Պալքաններում, Իտալիայում, Միջերկրականի ծովափնեայ երկրներում, հիմնում հայկական գաղութներ, դառնում նոր երկրների մշտական բնակիչներ, հասնում մեծ հարստութիւնների ու դիրքի, փառքի, առանձին դէպքերում ձեռք գցում իշխանութիւն, հասնում նոյնիսկ ինքնուրոյնութեան, սակայն բոլոր դէպքերում ճանաչւում արդէն որպէս ծնկի եկած ենթակայ մի ժողովուրդ, որը զրկուած հայրենիքից եւ պետականութիւնից, դեղերում էր օտարութեան մէջ, միշտ ճուլման, դիմազեղծման եւ անհետացման սպառնալիքի տակ։

Դժբախտաբար, հետագայ դարերում հայերի տեղահանման, արտագաղթի եւ հայ գաղթավայրերի կազմաւորման ընթացքը կանգ չի առնում, այլ շարունակւում է դարեր շարունակ, դառնալով հայոց պատմութեան մշտական ուղեկիցը եւ նրա անբաժանելի մասը։

Եթէ հին դարերում օտար նուաճողները մասսայական տեղահանումների ճանապարհով ձգտում էին թուլացնել Հայաստանի ռազմական, տնտեսական ուժը, ապա միջին դարերում եւ նոր ժամանակներում, սելճուք թուրքերն ու օսմանցիները նպատակ էին դրել գրաւել եւ սեփականացնել ենթակայ ժողովուրդների հողերը։

Աւելի քան չորս դար պայքարից յետոյ Թրքական պետութեանը՝ 20-րդ դարի սկզբի ցեղասպանների բանդային յաջողուեց իրականացնել սուլթանների բաղձանքը՝ եաթաղանի եւ տեղահանման միջոցով ամայացնել մի ամբողջ երկիր, որը հազարամեակներ չարունակ հայութեան բնօրրանն էր եղել։ Կանգ առաւ ընդմիշտ երկրից արտագաղթը, սակայն այն նորից շարունակուեց արդէն նոր երկրներից, կազմելով ու վերակազմելով հայոց նոր ու նոր գաղթավայրեր։

Բերուած փաստերը անառարկելիօրէն հաստատում են, որ հայ գաղթավայրերը կազմակերպուել են շատ հին ժամանակներից։ Հնագոյն գաղթավայրերից մէկը Բիւզանդիայի մայրաքաղաք Կոստանդնուպոլիսն է եղել, ուր հայերը հաստատուել ու ապրել են եւ միաժամանակ գոյատեւել աւելի քան 1500 տարի։

THE RISE AND DEVELOPMENT OF ARMENIAN COLONIES

VARTKES HAMAZASBIAN

The Armenian Diaspora has a very ancient history. Armenian and foreign sources already speak of its development in the early years of Armenia's existence and its continuance through the ages.

In this study the author first examines the formation of Armenian colonies during the Achaemenid period, the time of Alexander the Great, and up through the reign of King Tigranes the Great. Then the author discusses the formation of other colonies as a result of Sasanid and Byzantine policies towards the Armenians, stressing the role of the Armenians in the Byzantine Empire and the founding of totally new centers of Armenian life.